



***Մագիստրատուրայի ընդունելության քննական հարցաշար
Դեղագործական տեխնոլոգիա
2019-2020 ուստարի***

1. Փոշիները որպես դեղաձև: Փոշի դեղաձևերին ներկայացվող հիմնական պահանջները, պատրաստման տեխնոլոգիական փուլերը: Մանրեցման տեսությունը: Փոշիների խառնման առանձնահատկությունները:
2. Փոշիներ դժվար մանրեցվող, ներկող, ուժեղ ազդող և թունավոր դեղանյութերով, փոշիներ լուծամզվածքներով: Փոշիների դեղաչափումն ու փաթեթավորումը: Թշշան փոշիներ:
3. Արտաքին և ներքին օգտագործման հեղուկ դեղաձևեր, նրանց դասակարգումը, առավելություններն ու թերությունները: Լուծման տեսություն:
4. Լուծիչներ, նրանց դասակարգումը: Լուծիչներին ներկայացվող պահանջները: Թորած ջուրը որպես լուծիչ, նրա ստացման եղանակները:
5. Ցածրամոլեկուլյար միացությունների իրական լուծույթներ, նրանց առանձնահատկությունները, պատրաստման եղանակները: Հեշտ և արագ լուծվող, դանդաղ լուծվող դեղանյութերի, օքսիդիչների, միմյանց լուծելիությունը փոխադարձաբար լավացնող նյութերով լուծույթների պատրաստումը:
6. Ոչ ջրային լուծույթներ, նրանց ներկայացվող պահանջները: Ոչ ջրային լուծույթներում օգտագործվող ցնդող և չցնդող լուծիչները, նրանց առանձնահատկությունները և տվյալ լուծիչներով լուծույթների պատրաստման առանձնահատկությունները:
7. Բարձրամոլեկուլյար միացությունների լուծույթներ: ԲՄՄ-ի լուծույթների բնորոշ առանձնահատկությունները և նրանց ստացման տեխնոլոգիան: Անսահմանափակ ուռչող բարձրամոլեկուլյար միացությունների լուծույթների պատրաստումը:
8. Սահմանափակ ուռչող բարձրամոլեկուլյար միացությունների լուծույթների պատրաստման առանձնահատկությունները: Ժելատինի և օսլայի լուծույթների պատրաստումը դեղատնային պայմաններում:
9. Կոլոիդ լուծույթներ: Կոլոիդ լուծույթների բնորոշ հատկությունները: Կոլոիդ լուծույթների կոագուլյացիայի պատճառները: Պաշտպանված կոլոիդների լուծույթների պատրաստման առանձնահատկությունները:
10. Սուսպենզիաները որպես դեղաձև, նրանց առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները: Սուսպենզիաների կայունության վրա ազդող գործոնները:
11. Սուսպենզիաների առաջացման պատճառները: Սուսպենզիաների պատրաստման եղանակները: Դիսպերսիոն եղանակով սուսպենզիաների պատրաստման առանձնահատկությունները:
12. Կոնդենսացիոն եղանակով սուսպենզիաների պատրաստման առանձնահատկությունները: Սուսպենզիաների որակի ստուգումը, ձևավորումը, պահման պայմաններն ու բաց թողնումը:
13. Էմուլսիաները որպես դեղաձև: Էմուլսիաների տիպերը և տիպի որոշման եղանակները: Էմուլսիաների դասակարգումը և կայունացման մեխանիզմը: Էմուլգատորներ:

14. Սերմնային և յուղային էմուլսիաների պատրաստման առանձնահատկությունները: Դեղանյութերի ավելացումը էմուլսիաներում:
15. Ջրային հանուկներ դեղաբուսական հումքից: Ջրաթուրմեր և եփուկներ: Լուծամզման գործընթացը: Ջրային հանուկի որակի վրա ազդող գործոնները:
16. Ջրային հանուկների պատրաստման տեխնոլոգիական փուլերը: Լուծամզման պրոցեսի յուրահատկությունը՝ պայմանավորված ազդող նյութերի քիմիական ծագմամբ: Լորձերի պատրաստումը: Դեղանյութերի ավելացումը ջրային հանուկներում:
17. Քսուլները որպես դեղաձև: Քսուլների դասակարգումը: Քսուլային հիմքեր:
18. Հոմոգեն, հետերոգեն և կոմբինացված քսուլների պատրաստման առանձնահատկությունները:
19. Սուպոզիտորիաները որպես դեղաձև: Սուպոզիտորիային հիմքեր:
20. Դեղանյութերի ներմուծումը սուպոզիտորիային հիմքի մեջ: Սուպոզիտորիաների պատրաստումը ձեռքի գլորակման, լցման և մամլման եղանակներով:
21. Դեղերի արդյունաբերական արտադրության կազմակերպումը: Պատշաճ արտադրական գործնեության/ ՊԱԳ/ հիմունքներ:
22. Արտադրական ռեգլամենտ: Ստանդարտ գործողությունների ընթացակարգ: Նյութական հաշվեկշիռ: Արտադրական տերմինաբանություն:
23. Նյութերի մանրեցման և դասակարգման արտադրական գործընթացներ: Մանրեցման տեսական հիմքը: Մանրեցման եղանակները: Աղացներ և մաղեր:
24. Նյութերի խառնումը և տեղափոխումը: Խառնման բնորոշումը և տեսակները: Խառնիչների տեսակները: Նյութերի տեղափոխումը արտադրության ներսում:
25. Փոշիների ֆիզիկաքիմիական և տեխնոլոգիական հատկությունները: Փոշիների սորունության վրա ազդող գործոնները:
26. Դեղահատեր: Դեղահատերի դասակարգումը: Որակին ներկայացվող պահանջները: Դեղահատերի արտադրությունը: Դեղահատերի որակի ստուգումը:
27. Դեղահատավորման տեսությունները: Դեղահատավորման համար կիրառվող օժանդակ նյութեր և լցանյութեր: Դեղահատերի պատրաստումը ուղղակի մամլմամբ:
28. Դեղահատերի պատրաստումը հատիկավորված դեղահատավորման զանգվածից: Խոնավ հատիկավորում:
29. Չոր հատիկավորում: Դեղահատերի ծածկութապատումը: Ծածկութապատման եղանակների համեմատական բնութագիրը: Տրիտուրացիոն դեղահատեր:
30. Դեղապատիճներ: Առավելությունները և թերությունները: Կարծր և փափուկ դեղապատիճների արտադրությունը:
31. Հետերոգեն համակարգերի բաժանումը: Նստեցում /պարզեցում/, ֆիլտրում, ֆիլտրման արագության վրա ազդող գործոններ, ցետրիֆուգում:
32. Ջերմային գործընթացները դեղագործական արտադրությունում: Ջերմափոխանակման եղանակները: Գոլորշիացում և գոլորշիացուցիչներ:
33. Չորացում: Չորացման արագության վրա ազդող գործոնները: Կոնվեկտիվ, կոնտակտային, ադսորբցիոն, սուլիմացիոն չորացուցիչներ:
34. Լուծամզման տեսական հիմքը: Լուծամզման եղանակների դասակարգումը: Լուծամզվածքային պատրաստուկներ դեղաբուսական հումքից:
35. Էքստրազենտներ: Տեսակները և համեմատական բնութագիրը: Սպիրտի ռեկուպերացիան և ռեկտիֆիկացիան: Հանուկների մաքրման եղանակները:
36. Մանրեագերծ դեղաձևերի արտադրությունը: «Մաքուր սենյակներ» մանրեագերծ դեղաձևերի արտադրության համար:
37. Պարէնտերալ դեղաձևերի համար օգտագործվող տարաներ: Ամպուլային ապակի: Ամպուլային ապակուն ներկայացվող պահանջները: Ամպուլաների պատրաստումը և նախապատրաստումը ամպուլավորման:

38. Դեղագործական նպատակներով օգտագործվող ջուր: Ջրի մաքրման եղանակները: Ներարկման ջուր: Ներկայացվող պահանջները: Ստացումը, որակի ստուգումը և պահպանումը:
39. Ներարկման լուծույթերի պատրաստումը, կայունացումը և ֆիլտրումը: Ամպուլաների լցումը, փակումը, հերմետիկության ստուգումը:
40. Դեղաձևերի մանրէազնջման սկզբունքները և եղանակները: Մանրէազնջման արդյունավետության մշտադիտարկումը /հսկում/:

Դեղերի տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝

Թովիչյան Հ. Վ.